

9892

ԿԱՐՔԻ ՄԻ ՔԱՅԵԼԵԱՆ

ԳԻՒՂԱԿՈՆ ՀԵՌԱԽՈՍ

(ՊԱՏԿԵՐ ՄԵԿ ԳՈՐԾ)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՍՆԹԻՑ



Տպագր. Յ. ՊԵՂՈՍԵԱՆ
ԲԱՐԻՁ

1926

391.99
Մ-78

Դպրության շաբաթ և Ամսականություն

19 NOV 2023
Հայաստան

10. Ռ. 86

գիրք.

831.39

Ը-78

100
16
16

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԵՇԱԽՈՍ

(ՊԱՏԿԵՐ ՄԵԿ ԳՈՐԾ)

Ժամանակակից Հայաստանի կեանքից

1. Գիւղական ԽՈՐՀՈՒԹԻ ՆԱԽԵԳԱՆՑՅ
2. ՔԵՌԻ ՍԱՔՈ
3. ՔԱԽՈՐ ԽԵԶՈ

Գիւղական խորհրդի շինքը: Գրասեղան, աթոռ, նստարան: Պատից կախուած է հեռախոսը: Բեմը կամաց կամաց լրաւարում է և մթումեան մէջ երեւացող ուրուականները կենդանանում են:

ՆԱԽԵԳԱՆՑ. — Հմի իասկցա՞ր:

ԽԵԶՈ. — Որ դըռուստն ասեմ՝ չէ՞:

ՆԱԽ. — Որ կայ՝ տանձի նման մի շուշա է: Վերցնում ես ու կախ անում առաստաղից ու մթան մէջ, ինքն իրան լուս է տալիս:

ԽԵԶՈ. — Գլուխս զատ չի մտնում:

— 2 —

ՆԱԽ.— Վա՛ի, ոնց որ Յրագ, լուս է տալիս էլի :

ԽԵԶՈ.— Առանց նամի՞ն:

ՆԱԽ.— Հա՛ ի՞ա՛:

ԽԵԶՕ.— Էդ կոի առանց զուռնի՝ հարսանիք: Ասենք թէ հարսանիք ես՝ զնացել ու սիրող ուզումա մի լաւ պայածի լսել: Որ էդ զայրումար զուռնան չըլի — ձենք ո՞րտեղից կգայ: Նաֆթն էլ որ կայ՝ Յրագի զուռնան ա:

ՆԱԽ.— Մինչեւ հիմի Յրագի զուռնան, ոնց որ դու ես ասում, եղել է նամի՞ը, հիմի կլինի ջուրը:

ԽԵԶՕ.— Էդ խօ կիհանգցնի:

ՆԱԽ.— Ձի՛ հանգցնի: Այ՛, մի քանի ամսից յետոյ կը տեսնես: Կա մեր շշանի բոլոր գեղերը պիտի լուսաւոր-ւին առանց մի մատաշափ նամի՞ն: Հերիք է ինչքան ապրեցինք խաւարի մէջ, այսուհետ կապրինք լրւսի մէջ:

ԽԵԶՕ.— Զէ, ախալէր, հիմակուայ ջահէներդ ի՞նչ սատանայութիւն ապե՞ս:

ՆԱԽ.— Սիրելիս, դա սատանայութիւն չի, դրա ա-նունն է շինարարութիւն: Բա իսկի չե՞ս տեսնում չորս կողմէ ինչեր է կատարվում: Աւել չեմ ասում, սի տասը տարի՝ ու էն ժամանակ կտևնես մեր շայաստանը:

ԽԵԶՕ.— Համա մի ինդիքք ունեմ էդ Յրագը վառելիս ինձ կանչես՝ տեմնեմ, ախր առանց նամի՞ն ո՞նց էք վա-ռում:

ՆԱԽ.— Աչքի՛ս վրա: (Խէջօն գնում է, ներս է մըտ-նում մի ուրիշ գիւղացի):

ՍԱ.ՔՕ.— Բարի աջողում, հնգեր:

ՆԱԽ.— Բա՛րով, քեռի Յագօ:

ՍԱ.ՔՕ.— Հնգե՛ր նախակահ, մի ինդիք ունեմ:

— 3 —

ՆԱԽ.— Ասա՛ լսում եմ:

ՍԱ.ՔՕ.— Են ջաղացի տակին մը քարքարութիւն կայ, որ ընենց խոպան ընկած ա, խնդրում եմ ինձ տաս: Քա-րերը ես դիվի կմաքրեմ, զուր կանցկացնեմ, վար կանեմ: Մեծ ընտանիքի տէլ եմ, չեմ կառավարում: Գեղումն էլ աւել հող, դէ՛, գիտե՛ս, չկա:

ՆԱԽ.— Ցեմնեմ թուղթոյ:

ՍԱ.ՔՕ.— (Տալիս է թուղթը ու յետ-յետ գնում դէ-պի պատը, ուր հեռախօսն է կախած) Էդ տեղ դիվ գրել եմ:

(Հեռախօսի զանգը: Գիւղացին վեր է թոշում զան-պից):

ՍԱ.ՔՕ.— Է՞ս ինչ դութի ես պատից կախել:

ՆԱԽ.— Ղութի չի, հեռախօս է (Մօտենում է հեռա-խօսին):

ՍԱ.ՔՕ.— Լա՛ւ խոզ ա: (Հեռախօսի զանգը) Սիրտս ճաքեց: Գու իորն ողորմի, թամամ սատանի զանգակ ա:

ՆԱԽ.— (Վերցնելով լծակը) — Լսում եմ:

ՍԱ.ՔՕ.— (Նախագահին) — Զէ՛, ես էլ ասում եմ, որ լսե՞ս:

ՆԱԽ.— (Հեռախօսի լծակին) — Զէ՛մ լսում:

ՍԱ.ՔՕ.— (Նախագահին, բարձր ձայնով) — Ասի՛ դէ՛ ես էլ ասում եմ, որ լսես:

ՆԱԽ.— (Դառնալով Սաքոյին) — Քեզ իետ չեմ:

ՍԱ.ՔՕ.— (Չորս կողմը նայելով) — Բա ո՞ւմ իետ ես:

ՆԱԽ.— (Հեռախօսով) — Փառաքար գեղից ե՞ս:

ՍԱ.ՔՕ.— (Նախագահին) — Խի՞, չես իմանում, որ էս տեղաց եմ:

ՆԱԽ.— Լա՛ւ լա՛ւ, վաղը կաշխատեմ բոլոր թղթերը ուղարկել: (Լծակը գնում է):

ՍԱ.ՔՕ.— Բա՛ն չիասկացայ:

ՆԱ.Խ.— Սրան կասեն հեռախօս:

ՍԱ.ՔՕ.— Բա ես գիտացի, թէ ասում ես հերվան խոզ:

ՆԱ.Խ.— Զէ՛, իե - ռա - խօս: Այսինքն, մի գործիք, որի միջոցով կարելի է հեռու տեղերի հետ խօսիլ:

ՍԱ.ՔՕ.— Սա էլ թագա ֆանդ ա՞:

ՆԱ.Խ.— Այո՛, իմի շայաստանի բոլոր քաղաքներն ու գեղերը պիտի միացնեն իրաք հետ ու ո՛վ ում հետ ու զում է, թող խօսի:

ՍԱ.ՔՕ.— Ո՞նց:

ՆԱ.Խ.— Այ՛, խօսք օրինակ. էս մեր իարեւան Նորաշէն գեղում, ասենք թէ՛, մի գործ ունես՝ կգաս, կկանչես ում ուզում ես ու հետը կխօսես:

ՍԱ.ՔՕ.— Բա ձէնը էստեղից էնտեղ կգնա՞յ:

ՆԱ.Խ.— Կգնա՞յ:

ՍԱ.ՔՕ.— Ախը 14 վերստ ա:

ՆԱ.Խ.— Կուզե՞ս փորձե՞մ:

ՍԱ.ՔՕ.— Ապա մի հունարդ ցոյց տու:

ՆԱ.Խ.— Էնտեղ ծանօթ մարդ ունե՞ս:

ՍԱ.ՔՕ.— Ո՞նց չէ՛: Իմ հօրաքիրը՝ անունը ջավահիր ա:

ՆԱ.Խ.— Իսկ գիւղական խորիրդում ծանօթ չունե՞ս:

ՍԱ.ՔՕ.— Հա՛, հա՛, մեր քավոր Մուկուճը: Հինց Խորիրդի գրագիրն ա: Ուսումնական ա:

ՆԱ.Խ.— Այս ըովէիս: (Զանգահարում է): — Տւէք Նորաշէն: (Զանգահարում է):

ՍԱ.ՔՕ.— (Ինքն իրէն) — Զարխի պէս պտուտ ա տալի:

ՆԱ.Խ.— Կանչէ՛ք խնդրեմ գրագիր Մուկուճին:

— Մուկուճ էդ դու ես: Գո քաւոր Սաքօն ուզում է հետդ խօսի:

ՍԱ.ՔՕ.— ԼսԵ՞ց:

ՆԱ.Խ.— Առ խօսի: (Սաքօյին):

ՍԱ.ՔՕ.— (Երկիւղածութեամբ լծակը դնում է ականչին ու մի փոքր յետոյ դէն շպրտում):

ՆԱ.Խ.— Ինչի՞ դէն գցեցիր:

ՍԱ.ՔՕ.— Ականչո խուտուտ ա անում:

ՆԱ.Խ.— Օրիորդ խօ չե՞ս: Ա՛ռ, ականչիդ էսպէս պինդ հուալ տու ու խօսի:

ՍԱ.ՔՕ.— (Լծակը դնում է ականչին) — Պա՛հ քու տըղիս տղայ: Ձէն ա գալի: Կա՛ց, իլա կա՛ց: Իմ անունս ա տալի: Վայ ես քու ջիգարը ուտեմ: Էս մեր քավոր Մուկուճը չի՞: Վա՛հ, էս ձէնը փորդեղից ա գալի (Նայում է չորս կողմը):

ՆԱ.Խ.— Դէ՛, խօսի է՛:

ՍԱ.ՔՕ.— Իմ անունն ա տալի: Ասումա բարո՛վ, բարո՛վ:

ՆԱ.Խ.— Դէ՛, պատասխանը տու է՛:

ՍԱ.ՔՕ.— Ախը ձէնս չի' համնի:

ՆԱ.Խ.— Կիասնի՛, խօսի՛:

ՍԱ.ՔՕ.— (Գոռալով) Ադա՛ իէ՛, է՛ Մուկուճ:

ՆԱ.Խ.— (Զեր դնում է նրա բերանին): Կամա՛ց, կտրաքես:

ՍԱ.ՔՕ.— Պտի ընենց ասեմ լսի, թէ չէ՞:

ՆԱ.Խ.— Ես քեզ ասում եմ կլսի, հանդարտ խօսի:

ՍԱ.ՔՕ.— (Գլխարկը հանում է ու թափահարում): Բարո՛վ, բարո՛վ: Հա՛, ես եմ, քա՛վոր ջան, Սաքօն. (Նախագահին) — Ասումա, քավոր ջան, ո՞նց ես:

(Մուկուճին) — Ես քու հոգուն մատադ, լաւ եմ, լա՛ւ:

(Նախագահին) — Բօ՛, կովիցս ա հարցնում, ասում ա ծնե՞լ ա, թէ չէ՞:

(Մուկուճին) — Ո՞նց չի, ծնել ա: Ինքն էլ էգ: Փոխարէնը քեզ. . . այսինքն կովիդ ըլի: Հ՞ը: Քո կո՞վը: Ո՞սց թէ, ոնց թէ սատկեց: Պա՛ի քու տղիս տղա, ափսո՛ս, ափսո՛ս կով (Երկու ձեռը խփում է ծնկներին, հեռախօսի լծակը նորից ընկնում է գետնին):

ՆԱԽ. — (Վերցնում է լծակը): Էլի վեր գցեցի՞ր:

ՍԱ.Ք.0. — (Խփելով սրտին) Ձիգար ա է՛, քար չի:

ՆԱԽ. — Ի՞նչ պատահեց:

ՍԱ.Ք.0. — Խեղճի կովը սատկել ա: Պահ: Քու ծուխը կտրվի, Մուկո՛ւն:

ՆԱԽ. — Էլ ես ուզում խօսե՞ս:

ՍԱ.Ք.0. — (Առնում է լծակը): Մուկո՛ւն, Էտտեղ էլի կանգնած ե՞ս: Քու ծուխը կտրվի, ա՛յ, Մուկուն. . . Բա ի հարկ է որ, աշխարք ա, կպատահի. . . Իմ վոչխա՞րը: Մորթեցի: Հա մորթուցն էլ մի լաւ փափախ կարեցի: Խի՞ , հիա չես տեսե՞լ:

(Նախագահին) Հնգեր նախագահի, չի ըլի մի ընենց հնար ցոյց տաս, որ նա փափախս տեսնի՞:

ՆԱԽ. — Զէ, դեռ եւս դըրա գիւտը չի հասել շայաստան:

ՍԱ.Ք.0. — (Մտազբաղ) — Բալքի ըլում ա: (Լծակը բըռնում է մի ձեռին, իսկ միւս ձեռին՝ փափախը, ու մօտեցնում իրար): Կա՛ց, կաց:

ՆԱԽ. — Ի՞նչ ես անում:

ՍԱ.Ք.0. — Ասում եմ ըսենց պահեմ, բալքի երեւա:

ՆԱԽ. — Ի՞սը:

ՍԱ.Ք.0. — Փափախս:

ՆԱԽ. — (Ծիծաղելով) — Զէ՛, քեռի Սաքօ, անինար ա: Որ լինէր, կասէի: Դրա գիւտը դեռ չեն արել:

ՍԱ.Ք.0. — Գէ էդ իունարները, որ անում են, խի՞ չեն դիմի մի անգամից անում:

ՆԱԽ. — Էլ չե՞ս ուզում խօսի:

ՍԱ.Ք.0. — Հոգուտ մատաղ, կաց մի խօսք էլ ասեմ:

ՆԱԽ. — Առ: Շուտ:

ՍԱ.Ք.0. — Ադա Մուկո՛ւն, ըտեղ տեղումի կանգնած ե՞ս: Էքուց կիրակի ա, սրի մեր տուն, քռակինդ լաւ փըլաւ կտայ: Գէ գիտես էլի՛, արան էլ կի, առանց էն չի, հյայի տուն ա: Չես կարա՞ս: Էդ խի՞ , հա՛րամզադա: Ի՞նչ ցորեն հաւաքելու վախտ ա: Հա՛, էդ ջոկ բան ա: Էդ, գիդա՞ս, հոգու վարձք ա: Հոգու համար փրկութիւն ա: Ես ել կտամ, խի՞ չեմ տայ: Ղործ ա, քիչ ունեմ, ինձ հերիք չի, համա էրկու փուժ ցորեն էլ ես կտամ: Հա՛, դէ՛ նաս բարին: Գործիդ յաշողութիւն, Մո՛ւկուն ջան:

ՆԱԽ. — Վերջացըի՞ր:

ՍԱ.Ք.0. — (Լծակը տալիս է նախագահին) Ողորմի քո հօրը, էս ինչ լաւ բան ա եղել:

ՆԱԽ. — Հմի հաւատացի՞ր, որ քո ձէնը 14 վերստ կգնա՞յ:

ՍԱ.Ք.0. — Հա՛, իա: Հեթանոս էլ ըլէի՛ կիաւատայի: Գիդաս ի՞նչ ա ասում: Ասումա, էս մեր շայաստանի անաէր-անտիրական էրեխոց համար ցորեն ա հավաքում իրանց գեղումը: Լաւ ա անում: Բա մարդի խըղճ-մտանքը վո՞նց տանի, ընենց քորփաքորփա էրէխոց փողոցը թափի: Հենց գիտա՞ք քոնն ա: Էն օրը բազար էի գնացել՝ երեւան: Էշիս վրից մի կտոր պանիր ընենց թուցրին, վոնց որ մի դուշ... Քու արեւն եմ ասում, ա-

րունը տվեց գլուխս, զօփաս քաշեցի... իամա չտվի: Երեխա ա, ո՞նց խփեմ, բա նրա մէրը մեռնի, սիրտը
չի ուզի: (Հրջօրէն) Էդ հողը, որ ասում եմ, ինձ
տաս, վարձի փոխարէն տարին իինգ փութ ցորեն կտամ
էդ անտէը էրէխոց իամար:

ՆԱԽ.— Կեցցէ՞ս, քեռի Սաքօ, հողը տուի:

(Հեռախօսը զանգում է)

ՍԱՔՕ.— Կա՛ց, ինգեր նախագահ, մի բան էկաւ մի-
տըս, չեռու, իեռու քաղաքներում ու երկիրներում ըն-
ան հայեր ունենք, որ լաւաւ ապրում են: Մեր քա-
շած չարչարանքների մի մազաչափը չեն տեսել, Զի
ըլի՞, որ էս... անունը ինչ ա՞:

ՆԱԽ.— Չեռախօս:

ՍԱՔՕ.— Հա՛, իեռախօսով ասես, որ նրանք էլ մեր
Հայաստանին մի քիչ մտիկ անին:

ՆԱԽ.— Ի՞նչ քաղաքներում:

ՍԱՔՕ.— Ա՛յ, օրինակ Մոսկով (կամ տալ այն քա-
ղաքի անունը, ուր խաղացւում է այս պատկերը):

ՆԱԽ.— Մոսկո՞վ:

ՍԱՔՕ.— Հա՛: Խի՞, ձէնը մեր գեղիցը մինչեւ Մոսկով
չի հասնի:

ՆԱԽ.— Մոս . . . կով . . .

(Թեմը նորից կամաց կամաց մնառում է ևս գործող անձինք, իբրև ու-
րուականներ կորչում են մթութեան մէջ:

Գ.Ա.ՐԱ.ԳՈՅՑՐ



44190

— Գին և Փրանք —

Imp. O. BOGHOSIAN, 33, Rue Pichardcourt Paris (Xe)